Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«05» դեկտեմբերի 2024 թ. թիվ 206 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

/առ 02.12.2024թ./

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժինը, համաձայն ԳԿՄԿ բարելավման պլանի, ԳԿՄԿ ռազմավարական ծրագրի և ԳԿՄԿ ՈԱ բաժնի աշխատանքային տարեկան պլանի՝ 2024թ.-ին իրականացրել է հետևյալ գործառույթները.

1. **ԳԿՄԿ շրջանավարտների կողմից կենտրոնում ստացած կրթության արդյունավետության և կրթական ծառայությունների որակի գնահատում**

- Շարունակելով նախորդ տարիների փորձը և հիմնվելով համապատասխան կանոնակարգի վրա՝ իրականացվել են **շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի գնահատմանն ուղղված հետազոտություններ.**
  - Առկա 1,5 տարի ուսուցմամբ շրջանավարտների շրջանում (2022-2024թթ.) - 3 կուրս (22 ուսանող),
  - Առկա 2 տարի ուսուցմամբ շրջանավարտների շրջանում (2022-2024թթ.) - 3 կուրս (15 ուսանող):
  - Հեռակա 2 տարի ուսուցմամբ շրջանավարտների շրջանում (2022-2024թթ.) - 7 կուրս (70 ուսանող):
  - Մինչև տարեվերջ նախատեսվում է հարցում իրականացնել նաև հեռակա 2,5 տարի ուսուցմամբ 28 շրջանավարտների շրջանում:

Հետազոտությանը մասնակցել է ընդհանուր 107 ուսանող:

- **Իրականացվել է շրջանավարտների շրջանում ԳԿՄԿ-ի կողմից կազմակերպվող պրակտիկայի գնահատմանն ուղղված հետազոտություններ (գիտամանկավարժական և գիտահետազոտական/գիտաարտադրական).**
  - Առկա 1,5 տարի ուսուցմամբ շրջանավարտների շրջանում (2022-2024թթ.) - 3 կուրս (22 ուսանող),
  - Առկա 2 տարի ուսուցմամբ շրջանավարտների շրջանում (2022-2024թթ.) - 3 կուրս (15 ուսանող):
  - Հեռակա 2 տարի ուսուցմամբ շրջանավարտների շրջանում (2022-2024թթ.) - 7 կուրս (70 ուսանող):
  - Մինչև տարեվերջ նախատեսվում է հարցում իրականացնել նաև հեռակա 2,5 տարի ուսուցմամբ 28 շրջանավարտների շրջանում:

  Հետազոտությանը մասնակցել է ընդհանուր 107 ուսանող:
- **Իրականացվել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից շրջանավարտների գոհունակության հարցումներ.**
  - Առկա 1,5 տարի ուսուցմամբ շրջանավարտների շրջանում (2022-2024թթ.) - 3 կուրս (22 ուսանող),
  - Առկա 2 տարի ուսուցմամբ շրջանավարտների շրջանում (2022-2024թթ.) - 3 կուրս (15 ուսանող):
  - Հեռակա 2 տարի ուսուցմամբ շրջանավարտների շրջանում (2022-2024թթ.) - 7 կուրս (70 ուսանող):
  - Մինչև տարեվերջ նախատեսվում է հարցում իրականացնել նաև հեռակա 2,5 տարի ուսուցմամբ 28 շրջանավարտների շրջանում:

  Հետազոտությանը մասնակցել է ընդհանուր 107 ուսանող:

2. <u>ԳԿՄԿ մագիստրանտների՝ կիսամյակային դասընթացներից գոհունակության հարցումների կազմակերպում և տվյալների վերլուծություն</u>

- **Իրականացվել է նաև ուսումնառողների կողմից ԳԿՄԿ դասավանդման որակի և արդյունավետության գնահատմանն ուղղված հետազոտություններ, այդ թվում՝ կոռուպցիոն վտանգների բացահայտման և դրանց նվազեցմանն ու հաղթահարմանն ուղղված հատվածաբաժնով:** Հետազոտություններին մասնակցած ուսանողների ընդհանուր թիվը 365 է:
    - 2023-2024 ուստարի առկա 1-ին կուրս, 1-ին կիսամյակ - 10 կուրս (54 ուսանող):
    - 2023-2024 ուստարի առկա 2-րդ կուրս, 1-ին կիսամյակ – 6 կուրս (37 ուսանող):
    - 2023-2024 ուստարի հեռակա 1-ին կուրս, 1-ին կիսամյակ - 11 կուրս (79 ուսանող):
    - 2023-2024 ուստարի հեռակա 2-րդ կուրս, 1-ին կիսամյակ - 10 կուրս (75 ուսանող):
    - 2023-2024 ուստարի առկա 1-ին կուրս, 2-րդ կիսամյակ – 10 կուրս (48 ուսանող):
    - 2022-2023 ուստարի հեռակա 1-ին կուրս, 2-րդ կիսամյակ - 11 կուրս (72 ուսանող):
    - Նախատեսվում է մինչև տարեվերջ իրականացնել նաև 2023-2024 ուստարի հեռակա 2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ - 3 կուրս (28 ուսանող):
- **Իրականացվել է առցանց դասավանդումից ուսանողների գոհունակության գնահատում՝ հարցումների կազմակերպմամբ, որին մասնակցել է ԳԿՄԿ առցանց սովորողների 80 տոկոսը:**

3. <u>ԳԿՄԿ որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատանքներ</u>

- Առկա և հեռավար ձևաչափով կազմակերպվել և համակարգվել են ԳԿՄԿ որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատանքները:
- Կազմակերպվել և իրականացվել է ՈԱ պատասխանատուների տվյալների հստակեցում ըստ ամբիոնների:

- Քննարկվել է 2024-2029 թթ. ռազմավարական ծրագրի նախագծը, կազմակերպվել է ԳԿՄԿ Ռազմավարական ծրագրի գնահատում ստորաբաժանումների կողմից, իրականացվել է դիտարկումների հավաքագրում, ՌԾ ամբողջականացում:

4. <u>Համաժողովներ, վերապատրաստումներ, հանդիպումներ</u>

- **Կազմակերպվել է միջամբիոնային կապերի սերտացմանն ուղղված ամենամյա համաժողով** որակի ապահովման շրջանակներում: Համաժողովն ունեցել է 22 մասնակից:
- Իրականացվել է միջամբիոնային կապերի սերտացման ուղղությամբ կազմակերպված ամենամյա համաժողովի շրջանակում մասնակիցների գոհունակության գնահատում 19 մասնակցի շրջանում: Գնահատումն իրականացվել է հատուկ մշակված գործիքով: Վերլուծության արդյունքները տրամադրվել են շահակիցներին:
- **Կազմակերպվել և իրականացվել է ստորաբաժանումներում ՊԻԳԲ շրջափուլի վերաբերյալ վերապատրաստում՝** 19 մասնակցի ընդգրկմամբ:
- Իրականացվել է ստորաբաժանումներում ՊԻԳԲ շրջափուլի վերաբերյալ վերապատրաստման մասնակիցների գոհունակության գնահատում:
- **Կազմակերպվել և իրականացվել է** «Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավում, մոնիթորինգ և որակի գնահատում» թեմայով վերապատրաստում**:** Վերապատրաստմանը մասնակցել է ԳԿՄԿ 8 մասնակից: Վերապատրաստողն է եղել ՈԱԱԿ տնօրեն Ռ. Թոփչյանը:
- Իրականացվել է «Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավում, մոնիթորինգ և որակի գնահատում» թեմայով վերապատրաստման մասնակիցների գոհունակության գնահատում:
- ՈԱԱԿ և ԳԿՄԿ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է Կրթության կառավարում կրթական ծրագրի ուսանողների և շրջանավարտների վերապատրաստման մասնակցության ապահովումը: Վերապատրաստմանը մասնակցել են 3 հոգի, որոնցից 1-ը ստացել է ՈԱԱԿ հավաստագիր:

- **Կազմակերպվել են պարբերական հանդիպում-քննարկումներ գործատուների հետ**, որոնց ընթացքում հավաքագրվել և ուսումնասիրվել են գործատուների կարծիքները: Ընթացիկ տարում ուսումնասիրվել են «Երկրաբանություն», «Արևելագիտություն» ՄԿԾ-երի հիմնական գործատուների կարծիքները:

5. Գործընթացների և համակարգերի արդյունավետության գնահատումներ

- **Իրականացվել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից դասավանդողների գոհունակության գնահատում:** Հարցումն իրականացվել է 25 դասախոսների շրջանում: Հարցումների արդյունքները և վերլուծության հաշվետվությունը տրամադրվել են համապատասխան շահակիցներին:
- **Իրականացվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի (Mulberry) գոհունակության գնահատում և ընթացիկ խնդիրների բացահայտում:** Գործընթացի շրջանակում մշակվել է գնահատման գործիք, կազմակերպվել են հարցումներ, իրականացվել տվյալների վերլուծություն:
- **Իրականացվել է կենտրոնի պաշտոնական կայքի վերաբերյալ գոհունակության հարցման տվյալների վերլուծություն:** Գոհունակության հարցումները անցկացվել են ՈԱ և ՏՏ բաժինների կողմից, իսկ արդյունքների վերլուծությունը իրականացվել է ՈԱ բաժնի կողմից: Վերլուծության արդյունքները տրամադրվել են համապատասխան շահակիցներին՝ հետագա բարելավումների նպատակով:

6. Որակական գնահատումներ

- **Անցկացվել է կարիերայի աջակցման մեխանիզմներից շրջանավարտների գոհունակության որակական գնահատում (ֆոկուս-խմբային քննարկում):** Գործընթացի շրջանակում մշակվել է գնահատման գործիքը, կազմակերպվել են հարցումը, իրականացվել տվյալների վերլուծություն: Արդյունքները տրամադրվել են համապատասխան շահակիցներին:

- **Կազմակերպվել է խմբային հարցազրույց ուսանողների ակտիվության խրախուսման մեխանիզմներին ուղղված հանդիպման վերաբերյալ:** Հարցման արդյունքները վերլուծվել են, և դրանց հիման վրա կազմվել են համապատասխան հաշվետվություն:

7. **<u>Ամբիոնների գործունեության գնահատում և տվյալների հավաքագրում</u>**

- **Իրականացվել է տվյալների հավաքագրում ամբիոններից փոխադարձ գնահատման արդյունքների վերաբերյալ:** Առկա են հավաքագրված տվյալներ էլեկտրոնային բազայում, որը պարունակում է 5 ամբիոնների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:
- **Իրականացվել է ԳԿՄԿ ամբիոնների 2023-2024 ուստարվա գործունեության ՈԱ գնահատման հաշվետվությունների հավաքագրում:** Հավաքագրված հաշվետվությունները ներառում են 12 ամբիոնների տվյալներ, տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ ԳԿՄԿ ամբիոնների 103 նիստերի շրջանակներում քննարկվել են ՈԱ բաժնի տրամադրած տետազոտությունների արդյունքներն ու բարձրաձայնված խնդիրները:

8. **<u>ՈԱ գործունեության արդյունավետության ապահովման աշխատանքներ</u>**

- **Իրականացվել է ԳԿՄԿ բարելավման պլանով նախատեսված գործողությունների ընթացիկ մշտադիտարկում**, որի արդյունքներն ամփոփվել են միջնաժամկետ հաշվետվությունում: Կազմակերպվել է ԳԿՄԿ բարելավման պլանով նախատեսված գործողությունների իրականացման վերաբերյալ միջնաժամկետ հաշվետվության կազմման աշխատանքների կազմակերպում ԳԿՄԿ-ում: Հաշվետվությունը տրամադրվել է համապատասխան շահակիցներին և արտաքին փորձագետներին ՈԱԱԿ-ից: **Կազմակերպվել է ԳԿՄԿ միջնաժամկետ մշտադիտարկումը ՈԱԱԿ-ի կողմից:**
- Կազմվել է ՈԱ մեխանիզմների և գործիքաների կիրարկման պլան-ժամանակացույց/քարտեզ, որն ընդգրկում է ՈԱ բաժնի մշակած բոլոր անհրաժեշտ քայլերը և գործողությունները:

- Իրականացվել են ՈԱ նոր ձեռնարկի մշակման աշխատանքներ, որի ընթացքում նախապատրաստվել է ձեռնարկի նոր տարբերակը:
- Իրականացվել են ընթացիկ աշխատանքներ, իրավիճակային վերլուծություններ, տնօրենի հանձնարարականներ:
- ՈԱ բաժնի պետը, իր լիազորությունների շրջանակներում, ներկայացրել է ԳԿՄԿ-ն տարբեր աշխատաժողովների, հանդիպումների, գիտաժողովների և սեմինարների ժամանակ:

Բաժնի պետ՝ Ն. Վարդանյան

02.12.2024 թ.